ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 24.08.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԷՍ-2017/06

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.05.2017թ. թիվ 03/73-3/9401-17 գրությամբ «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1.<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 20.05.2017թ. թիվ 01/61-9039 գրության հիման վրա, 27.05.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երին (այսուհետ՝ նաև Ընկերություններ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը 20.05.2017թ. թիվ 01/61-9039 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին գնահատող հանձնաժողովի 05.05.2017թ. որոշմամբ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից են ճանաչվել համատեղ գործունեությունով (կոնսորցիումով) «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երը (այսուհետ՝ Ընկերություններ):

06.05.2017թ. Ընկերություններին ծանուցվել է, որ նույն ծանուցումն ստանալուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում պարտավոր են պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ gagik.huroyan@yerevan.am ուղարկել ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 10.02.2011թ. N 168-Ն որոշման 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը, (որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը), սակայն Ընկերությունների կողմից որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթեր չեն ներկայացվել:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքով և Կարգի 122-րդ ենթակետի դրույթներով՝ խնդրում եմ «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երի նկատմամբ նախաձեռնել համապատասխան գործընթաց՝ վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Երևանի քաղաքապետարանի լիազորված ներկայացուցիչ Գագիկ Հուրոյանը:

3. <u>«ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Խորհուրդը դիմել է «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.05.2017թ. թիվ 03/73-3/9401-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունները՝ պատշաճ ծանուցված լինելով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերի վերաբերյալ՝ չեն ապահովել իրենց ներկայացուցիչների մասնակցությունը նշված նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2017/06 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 27.05.2017թ. թիվ 03/73-3/9401-17 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 20.05.2017թ. թիվ 01/61-9039 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երի ներկայացված հայտը, «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 05.05.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 2 և 15.05.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությունները, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

Երևանի քաղաքապետարանը Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Ա.Գաբրիելյանի անվան երաժշտական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով գնման բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

Ընթացակարգին մասնակցելու նպատակով համատեղ գործունեության կարգով հայտ են ներկայացրել նաև «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երը:

Հանձնաժողովը 05.05.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 4.1 կետով որոշել է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «ՌԱՖ ՇԻՆ» ՍՊԸ և «ԳՈՑ» ՍՊԸ կոնսորցիումը:

Նույն արձանագրության 4.2 կետով Հանձնաժողովը որոշել է հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ոչ ավտոմատ եղանակով ծանուցել՝ հրավերով սահմանված կարգով՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ gagik.huroyan@yerevan.am, ներկայացնել ՀՀ կառավարության «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» 10.02.2011թ. N 168-Ն որոշման 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը, (որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը):

Հանձնաժողովը 15.05.2017թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.2 կետով որոշել է մերժել «ՌԱՖ ՇԻՆ» ՍՊԸ և «ԳՈՑ» ՍՊԸ կոնսորցիումի հայտը՝ վերջինիս կողմից՝ որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմնավորմամբ:

«ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երի միջև 04.05.2017թ. կնքված Համատեղ գործունեության N01 պայմանագրի 1.1 կետի ա) ենթակետի համաձայն՝ Գործընկեր-1-ն (տվյալ դեպքում՝ «ՌԱՖ ՇԻՆ» ՍՊԸ-ն) ապահովում է հրավերով սահմանված՝

- մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշի առկայությունը 1-ին չափաբաժնի համար,

- տեխնիկական միջոցներ որակավորման չափանիշի առկայությունը 1-ին չափաբաժնի համար,

- աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշի առկայությունը 1-ին չափաբաժնի համար(...):

Գործընկեր-2-ն (տվյալ դեպքում՝ «ԳՈՑ» ՍՊԸ-ն) ապահովում է հրավերով նախատեսված՝

- մասնագիտական փորձառություն որակավորման չափանիշի առկայությունը 1-ին չափաբաժնի համար,

- աշխատանքային ռեսուրսներ որակավորման չափանիշի առկայությունը 1-ին չափաբաժնի համար(...):

Ընկերությունները ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի՝

- N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել են, որ «ԵՔ-ԲԸԱՇՁԲ-17/84» ծածկագրով բաց ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման աշխատանքներ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 25 000 000 ՀՀ դրամ, և պարտավորվել են հրավերով սահմանված կարգով ներկայացնել նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,
- N 3.3 հավելվածով՝ տեխնիկական միջոցների մասին հայտարարությամբ, Ընկերությունները հայտնել և հավաստել են, որ «ՌԱՖ ՇԻՆ» ՍՊԸ և «ԳՈՑ» ՍՊԸ կոնսորցիումը ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ, և այդ տեխնիկական միջոցներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը, և պարտավորվել են հրավերով սահմանված կարգով ներկայացնել նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը,
- N 3.6 հավելվածով՝ աշխատանքային ռեսուրսների մասին հայտարարությամբ, Ընկերությունները հայտնել և հավաստել են, որ «ՌԱՖ ՇԻՆ» ՍՊԸ և «ԳՈՑ» ՍՊԸ կոնսորցիումը ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ, և այդ աշխատանքային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը, և պարտավորվել են հրավերով սահմանված կարգով ներկայացնել նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը

հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ gagik.huroyan@yerevan.am, է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղն զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երի կողմից որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը հրավերով սահմանված ժամկետներում գնահատող հանձնաժողովին չեն ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ա) ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից

պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Նույն մասի՝ համապատասխանաբար 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ:

• 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայման-ներին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

• 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Խորհուրդը գտնում է, որ հրավերով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելով՝ Ընկերությունները խախտել են ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1, N 3.3, և N 3.6 հավելվածներով ստանձնած՝ հրավերով սահմանված կարգով նույն հայտարարությունները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու պարտավորությունը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն

մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.05.2017թ. «ՌԱՖ ՇԻՆ» և «ԳՈՑ» ՍՊԸ-երին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ